

խոցոտ, եւ ալլ ալսպիսի ցաւ . եւ ձիանք
 136 երկրին են կարի վազողք. եւ մարդիքն քան
 զձիանքն:

Ալլ եւ կայ ծառ մի մեծ որ բարձր է քան
 զզանկակատունն Փիղալու, եւ տակն այնքան
 140 հաստ է որ բոլորն կու փորեն. 15 եւ 20
 կամարաւ կու շինեն. եւ գլուխն փոքր ճուղ
 ունի, եւ պտուղ ունի. որպէս թարում
 փշատի նման է եւ թթվաշ ունին զայն. կայ
 144 եւ բամպակի ծառ որ մեծ է իբրեւ ունկզի
 ծառ եւ ի տարին բոլոր պտուղ կու տայ եւ
 կու մնա մինչեւ Ճ տարին. կայ եւ ծառ
 չափթալուի որ 2 լիրա կու կշռէ մին հատն.
 148 եւ ի տարին բոլոր պտուղ կու բերէ: Կայ եւ
 ազգ մի եզն որ ամէն պոչն ի. հոխայ ջուր
 կու տանի որ կու մորթեն կուտեն. կայ եւ
 էշ վայրի գեղեցկախայտ որ թագաւորաց
 152 փէշքաշ կու տանին: Կա եւ ազգ մի կեն-
 դանի որ Զառնափա ասեն որ վիզն խիստ
 երկայն է դէվազուշու նման է եւ ինքն է
 քան զէզն մեծ եւ յետքն բարձր է քան զա-
 156 ռաջքն. եւ ինքն խիստ սիրուն կաշի ունի
 պուտ պուտ: Կա եւ սամուր պատուական
 որ մէկ հատն մին քիւրք կու լինի: Եւ եր-
 կիրն բնաւ ոչ բմպեն ջուր ալլ մեղրի գինի
 160 եւ բոզայ: Եւ ի Հապաշի երկիրն ոչ գոյ բը-
 նաւ արծաթ: պղինձ. կլայէկ, արճէճ, բայց